

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2020 թ. առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառույթների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԻ և ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ <<ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ>> ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի գործունեության հրապարակայնությունն ապահովելու նպատակով կատարված աշխատանքների լուսաբանումն իրականացվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի <<Նորություններ>> բաժնում տեղադրված նյութերով, ֆեյսբուքյան էջով և մարզպետարանի գործունեությունը լուսաբանող հաղորդագրություններով:

2020 թ. առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքէջի <<Նորություններ>> բաժնում տեղադրվել են 264 լուսաբանական նյութեր, որոնք եղել են լրատվական բնույթի հաղորդումներ, ուղերձներ, հայտարարություններ և իրազեկումներ:

Դրանք արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությունը, մարզպետի՝ մարզի տարբեր համայնքներում կատարած աշխատանքային այցերը, մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուդարձը, ինչպես նաև ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները:

<<Նորություններ>> բաժնում տեղադրվել են նաև արտակարգ դրության ընթացքում Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) համավարակի տարածման դեմ ՀՀ կառավարության, ՀՀ պարետատան, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի և մարզի համայնքապետարանների կողմից կատարված աշխատանքների և իրականացված միջոցառումների վերաբերյալ իրազեկման, լուսաբանման և այլ բնույթի նյութեր:

Հաշվետու ժամանակահատվածում <<Նորություններ>> բաժնում համապատասխան նյութերով համալրվել են <<Ելույթներ և հարցազրույցներ>>, <<Ուղերձներ>>, <<Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ>> ենթաբաժինները:

2020 թվականի մարտին մարզպետարանի կայքէջում բացվել են հետևյալ բաժինները.

1. <<COVID 19>> անվանումով բաժինը և հղում է տրվել ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջի նույնանուն բաժնին:
2. <<Ինչպես դիմել համայնքապետարան>> անվանումով բաժինը, որում տեղադրվել է համայնքային կայքերից օգտվելու համար նախատեսված համայնքապետարաններ առցանց դիմելու <<Ուղեցույցը>>:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԻ ԱՅԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Մշտապես թարմացվել են (ըստ անհրաժեշտության) Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի 24 բաժիններն իրենց 130-ից ավելի ենթաբաժիններով:

Տարվա ընթացքում Վայոց ձորի մարզպետարանի կայքէջում պարտադիր հրապարակվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի ընդունած որոշումները, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները և մարզպետարանի գործունեության տարեկան աշխատանքային ծրագիրը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության օրերի, վայրի և ժամի, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունների մասին տեղեկությունները, ամենամսյա ընդունելության կազմակերպման մասին հայտարարությունը, մինչև արտակարգ դրության ժամանակահատվածն ընկած ամիսներին նախապես տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքէջի <<Նորություններ>> բաժնում, իսկ կայանալուց հետո՝ արդյունքների մասին տեղեկություններն են տեղադրվել:

Ամսական ընդունելության արդյունքները տեղադրվել են նաև <<Քաղաքացիների ընդունելություն բաժնի>> << Ընդունելություն արդյունքներն ամսական կտրվածքով >> ենթաբաժնում:

Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության (COVID 19) համավարակի դեմ պայքարի շրջանակներում ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված, 2020 թվականի մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսներին քաղաքացիների ընդունելություն չի կազմակերպվել:

Հանրային իրազեկում ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը համագործակցել է զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների հետ:

Պաշտոնական կայքէջում ըստ համապատասխան բաժինների և էջերի տեղադրվել են պարտադիր հրապարակման ենթակա ամբողջ տեղեկատվությունը, մարզպետարանի գործունեությանն առնչվող նորությունները (հետևյալ հասցում՝ <http://vdzor.mtad.am/TAorenq7/>):

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ
ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԵՎ ԲՈՂՈՔ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՋԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին արվել է 34 գրավոր հարցում, որոնց բոլորին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրվել են պատասխաններ: Հարցումները և պատասխանները տեղադրվել են մարզպետարանի կայքէջում:

Մարզպետարան դիմած քաղաքացիների դիմում-բողոքների վերաբերյալ 2019 թ. ամփոփ տեղեկանքը և 2020 թվականի առաջին եռամսյակի վերաբերյալ տեղեկանքը տեղադրվել են կայքէջում, իսկ 2020թ. առաջին կիսամյակի ամփոփը կտեղադրվի հուլիս ամսին:

Ս/թ հուլիսին կկազմակերպվի ՀՀ Վայոց ձորի մարզպետի մամուլի ասուլիսը, նվիրված 2020 թ. առաջին կիսամյակի արդյունքների ամփոփմանը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի
տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժնի պետ՝

Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

01.07.2020